

Բ.

Եղէք հիմա, իմ տեղս, նման գեղի մը մէջ վարժապետ: Որ օրհարսակին (կէսօր) ցամաք հացը կրակին կակուղցնելու ու առանց ողբերգութեան, ընկերվարական հանգանակներու աղովը դառնացած զգացումներու, փորին կը նետէ այդ օտարէն եկած ժուժը ու կը դառնայ տէյպատուն, գիրքերուն դպրատունը- մեծ սենեակ մը, առանց հիմի չորս պատերու վրայ, տակը ախոռ: Արգելած եմ կենդանի կապելը: Այդ սենեակը, փոխակերպուած հին հիւրանոցն է գիւղին, ուր կ'անցընէին իրենց գիշերը ճամբորդ մարդիկ: Կառավարութեան հրամանով, հայ գեղը փակած է հիւրանոցը հեռուներէն գալիք ճամբորդներու: Հին դպրոցին շէնքը փլած է շատոնց: Նոր մը կառուցանելու անկարելիութիւնը, Պրուսայի գաւառական ժողովին վկայութեամբը (ուր երեսփոխանները, որոնք այդ գիւղը կը ներկայացնեն իրենց մուշտակի վաճառանոցներուն ետին, առանց տեսած ըլլալու գոնէ անգամ մը այդ վերանէն (աւերակը), վաւերացուցած են քաղաքական ժողովի ծրագիրը.- ծախքերը կրնատելու, խնայողութիւն ընելու, դպրոցի կառուցման արտօնագիրը ստանալու առիթով աւելորդ ձանձրոյթ չպատճառելու բարեխնամ կառավարութեան) գեղին օտան վերածած է